ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Մայիսի 12-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը, որին ներկա էին՝ ընկ. Ֆ. Սարգսյանը, Ռ. Արզումանյանը, ՍՄԿԿ Կենտկոմի պատասխանատու աշխատող Ա. Մախորինը, ՀԿԿ Կենտկոմի գիտության և ուսումնական հաստատությունների բաժնի վարիչ Ա. Մելիքոնյանը:

Բացելով ժողովը, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը ներկաներին խնդրեց հոտնկայս հարգել 1987 թ. կյանքից հեռացած հանրապետության գիտությունների ակադեմիայի իսկական անդամների և թղթակից-անդամների հիշատակը։ Ներկաները հոտնկայս հարգեցին նաև 1988 թ. փետրվարի վերջերին Սումգայիթ քաղաքում չարդերի ժամանակ սպանված հայ ժողովրդի զավակների հիշատակը։

Մեր կյանքի վերակառուցման պայմաններում, ներածական խոսքում ասաց Վ. Համբարձումյանը, մեծ է այն բանի նշանակությունը, թե գիտնականները որքան խոր և բազմակողմանիորեն կըմբռնեն գիտության դերի ու տեղի կարևորությունը այդ դինամիկ պրոցեսում, որը կոչված է մեր երկիրը բարձրացնելու զարգացման որակապես նոր մակարդակի։ Դրա համար անհրաժեշտ են ոչ միայն նոր մտածողություն, գիտական նոր մոտեցումներ, այլև հիմնարկների կազմակերպական կառուցվածքի համապատասխանեցում գիտական որոնման ներկայիս առանձնահատկություններին։ Պրեզիդենտը հիշեցրեց, որ մշակվել և գործում է հանրապետության գիտությունների ակադեմիայի զարգացման մինչև 2000 թվականն ընկած ժամանակաշրջանի համալիր ծրագիր։ Գիտական հիմնարկներում կառուցվածքային փոփոխություններ են կատարվում, որոնք կազմակերպական ձևերը կհամապատասխանեցնեն առաջադրված գիտական խնդիրների առանձնահատկություններին։ Վ. Համբարձումյանը մեծ ուշադրություն նվիրեց գիտաշխատողների ատեստավորմանը, որը պետք է որոշի, թե ով ինչքանով է համապատասխանում նոր պահանջներին, թե ով է ընդունակ իր ստորաբաժանումներում մոբիլիզացնելու մարդկանց, լինելու «գաղափարների գեներատոր» կամ մշակելու այդ գաղափարները։ Այս հատկանիշներով էլ հենց պետք է որոշվի նաև ակադեմիայի ինստիտուտների գիտաշխատողների ստատուսը։

ՍՄԿԿ XXVII համագումարը նշեց, որ վերակառուցման արդյունավետությունը, տնտեսական աճը մեծապես կախված են մեքենաշինությունից։ Հանրապետության մեքենաշինական համալիրին առաջադրվել են զարգացման արագ տեմպեր, այստեղ պետք է երեք-չորս անգամ կրճատվեն նոր տեխնիկայի մշակման և յուրացման ժամկետները։ Տեխնիկական բազան արագորեն նորացնելու, այն նոր որակական վիճակի փոխագրելու կուսակցության այդ հիմնադրույթների լույսով պահանջվում է նոր գաղափարների և դիտական մշակումների մշտական համալրում։ Եվ միանգամայն բնական է, որ այդ բնագավառում վճռական դերը հատկացվում է հիմնարար հետազոտություններին, որոնք կոչված են գլխավորելու վերակառուցումը մեքենաշինության մեջ։

Անհրաժեշտ է գիտության վճռական շրջադարձ դեպի արտադրության պահանջմունքները։ Իր հերթին արտադրությունը ևս նույնքան վճռականորեն պետք է շրջվի դեպի գիտությունը։ Հաշվետու տարում ստացվել է գյուտերի համար 109 դրական որոշում, իսկ ներդրման համար ներկայացված է դրանց ընդամենը մեկ հինգերորդը։

ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտը իր խոսքում զգալի տեղ հատկացրեց ժամանակակից տեխնիկական միջոցներով գիտական հիմնարկները հագեցնելու հարցերին, նշեց, որ մի շարք հատուկ կոնստրուկտորական բյուրոների կոլեկտիվներ կարող էին իրենց մշակումներով այդ հիմնարկներին մեծ օգնություն ցույց տալ։ Հանրապետության գիտությունների ակադեմիայի պլանով 1987 թ. նախատեսված էր կատարել 6,5 մլն. ռուբլու տնտպայմանագրային աշխատանք, բայց կատարվել է կրկնակին։ Սա խոսում է այն մասին, որ ակադեմիայի այդ հիմնարկների ստեղծագործական պոտենցիալը և տեխնիկական հնարավորությունները կարող են բավարարել էկոնոմիկայի, ամբողջ ժողովրդական տնտեսության ամենաբարդ պահանջմունքները։

Երկրի հասարակական կյանքի դեմոկրատացումը հասարակագետ գիտնականների առջև դրել է մի ամբողջ շարք պրոբլեմներ ու հարցեր, որոնց անցյալում ուշադրություն չէր դարձվում։ Այսօր կյանքը հրամայաբար պահանջում է, ասաց Վ. Համբարձումյանը, վերադառնալ

այն թեմաներին, որոնք անհատի պաշտամունքի տարիներին, լճացման ժամանակաշրջանում գիտական հետաքրքրության շրջանակներից դուրս էին մնացել։ Նա կոնկրետ խնդիրներ առաջադրեց ակադեմիայի հիմնարկների կոլեկտիվներին՝ վերակառուցման արդի պահանջների և սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրների լույսով։

ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի 1987 թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքների մասին զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնակատար, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Դ. Սեդրակյանը։ Նա ասաց, որ վերակառուցման պայմաններում սոցիալ-տնտեսական զարգացումն արագացնելու խնդիրը և կյանքի բոլոր բնագավառների դեմոկրատացումը սովետական գիտության առջև սկզբունքորեն նոր խնդիրներ է դրել։ Նախորդ տարիների փորձը ցույց է տալիս, որ վերակառուցումը դեռևս անբավարար տեմպերով է ընթանում. հաղթահարված չեն դանդաղկոտությունը, հնից հրաժարվելու դժկամությունը, անվճռականությունը, վեհերոտությունը։ Զեկուցողն ասաց, որ ՍՄԿԿ Կենտկոմի 1988 թ. փետրվարյան պլենումը քննեց «Միջնակարգ ու բարձրագույն դպրոցի վերակառուցման ընթացքի և դրա իրականացման ուղղությամբ կուսակցության խնդիրների մասին» հարցը։ Պլենումը մասնավորապես նշեց բարձրագույն դպրոցի, ակադեմիական և ճյուղային ինստիտուտների ավելի սերտ փոխգործակցության, ժամանակավոր միջգերատեսչական գիտատեխնիկական կոլեկտիվների ստեղծման անհրաժեշտությունը, ընդգծեց, որ պետք է պրակտիկա դարձնել բուհերի դասախոսների ստաժավորումը ակադեմիայի հիմնարկներում, կազմակերպել երկակի ենթակայության լաբորատորիաներ, ինստիտուտներ, ընդարձակել բուհերի ամբիոնների և ակադեմիայի ինստիտուտներում դրանց մասնաճյուղերի ցանցը։ Այս պահանջներին հակառակ, այսօր Երևանի պետական համալսարանի հետ ակադեմիայի փոխադարձ կապերը նվազագույնի են հասցված, ինչը անուղղելիորեն վնաս է պատճառում գիտական կադրերի պատրաստմանը և հանրապետությունում գիտության զարգացմանը։ Արդեն ժամանակն է գործնականորեն անցնել փոխադարձ մերձեցման։

Այնուհետև Դ. Սեդրակյանը կանգ առավ ակադեմիայի աշխատանքում կատարված դրական տեղաշարժերի վրա, խոսեց կազմակերպական գործունեության վերակառուցման, գիտության ղեկավարման մեջ կատարվող ապակենտրոնացման, դեմոկրատացման պրոցեսների, հրապարակայնության ընդլայնման, ստեղծագործական պրոցեսում գիտական կոլեկտիվների դերի մեծացման մասին։ Նշեց, որ մեծ աշխատանք է տարվել այն փաստաթղթերի նախապատրաստման ուղղությամբ, որոնցում արտացոլվել է ակադեմիայի գիտական հետազոտությունների ուղղությունը։ Քննարկվել և սահմանվել են այն հեռանկարային ուղղությունները, որոնցում ակադեմիան կարող է կամ առաջատար տեղ գրավել կամ էլ արդյունավետորեն մասնակցել դրանց մշակմանը։

Այժմ ակադեմիայի գիտնականները մասնակցում են ընդհանուր միութենական 17 գիտատեխնիկական ծրագրերի և ՍՍՀՄ գիտության և տեխնիկայի պետական կոմիտեի հաստատած 5 պլանների շրջանակներում հետազոտությունների կատարմանը, լրացուցիչ մշակվում է ևս 13 թեմա։

Այնուհետև զեկուցողը հանդամանորեն խոսեց ակադեմիայի հիմնարկների գիտական նոր ստորաբաժանումների գործունեության մասին, նրշեց, որ գյուտարարական աշխատանքների արդասավորության բարձրացման նպատակով ստեղծված է նաև գյուտերի ներդրման ընդհանուր ակադեմիական բաժին։

Անդրադառնալով ՀՍՍՀ ԳԱ համակարգում տեղի ունեցող վերակառուցման ընթացքը լուսաբանող հանրապետության մասսայական ինֆորմացիայի միջոցների աշխատանքին, Դ. Սեդրակյանը նշեց, որ մամուլի ելույթները հիմնականում օբյեկտիվ և գործարար բնույթ են կրում։ Նույնը չի կարելի ասել, սակայն, օրինակ, ֆիզիոլոգիայի ինստիտուտի վերաբերյալ «Սովետական Հայաստան» թերթում տպագրված հոդվածի մասին։ Միաժամանակ հարկ է, որպեսզի տպագիր օրգանները զանազան կազմակերպությունների աշխատանքի թերությունները բացահայտելուն զուգընթաց ներկայացնեն նաև այն գրականը, որ ձեռք է բերվում վերակառուցման ընթացքում։

Տարեկան ընդհանուր ժողովում զեկուցման շուրջ ծավալվեց մտքերի աշխույժ և անկաշկանդ փոխանակություն, որին մասնակցեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Մ. Տեր-Միքայելյանը, Էդ. Ջրաշյանը, Ա. Գաբրիելյանը, Մ. Ներսիսյանը, Ֆ. Սարգսյանը, Մ. Քոքանյանը, ակադեմիայի թղթակից-անդամներ Մ. Մովսիսյանը, Վ. Խոջաբեկյանը, Վ. Բարխուդարյանը։ Նրանք հավանություն տվեցին հաշվետու զեկուցմանը և խոսեցին գիտության վերակառուցման, գիտական ուղղությունների զարգացման ընտրության հնարավորությունների, նորագույն տեխնիկայի և սարքավորումների ներդրման, խմելու ջրի պրոբլեմի կարգավորման, ակադեմիային կից էկոլոգիական հարցերով զբաղվող գիտական կենտրոն ստեղծելու հրատապ անհրաժեշտության, Երևան քաղաքի զարգացման հեռանկարների, քաղաքի էկոլոգիական վիճակը առաջիկայում ևս բարելավելու,

Հայկական ակադեմիային վայել արդիական տպագրական համապատասխան բազայի ստեղծման, հասարակագետ գիտնականների համար նոր մասնաշենք կառուցելու մասին։ Իրենց ելույթներում ակադեմիկոսներն ու թղթակից-անդամներն առաջ քաշեցին մշակութային-հասարակական բազմաթիվ հարցեր, մասնավորապես հայ ժողովրդի պատմության, գրականության ասպարեզում մինչ այժմ փակ մնացած դեմքերի, էջերի ուսումնասիրության, հոբելյանների, հիշարժան տարեթվերի (Մովսես Խորենացու «Հայոց պատմության» 1500 ամյակը, Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» 1000 ամյակը) նշում, Հովհ. Թումանյանի երկերի լիակատար ժողովածուի հրատարակության հետ կապված հարցեր (թուղթ, տպագրություն, բաժանորդագրություն) և այլն։ Ելույթ ունեցողները հատկապես հանգամանորեն անդրադարձան արդի փուլում ազգային հարցերի ինտերնացիոնալ լուծման, ազգային և սոցիալ-տնտեսական խնդիրներին նոր տեսանկյուններով մոտենալու, Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի էկոնոմիկայի, պատմության, ժողովրդագրության հարցերին։ Նշվեց, որ այսուհետև անհրաժեշտ է ժամանակին ստեղծել երևույթների գնահատման գիտական-քաղաքական պլատֆորմ և ոչ թե գնալ կատարված դեպքերի ու իրադարձությունների հետևից։ Ելույթներում միահամուռ հարց բարձրացվեց, որպեսզի ընդհանուր ժողովը դատապարտի Սումգայիթ քաղաքում հայ բնակչության նկատմամբ իրագործված բռնությունները և սպանությունները և ընդհանուր ժողովի որոշման մեջ ընդունվի համապատասխան կետ՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզը Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության վերամիավորելու օգտին։

ՀՍՍՀ ԳԱ տարեկան ընդհանուր ժողովում տեղի ունեցավ հանրապետության գիտությունների ակադեմիայի պատվավոր պարգևների հանձնման հանդիսավոր արարողություն։ Գիտական արդյունավետ և անխոնջ գործունեության համար «Մեծարման գիր» հանձնվեց ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Ն. Հարությունյանին և Վ. Զաքարյանին։ Գիտահետազոտական արդյունավետ գործունեության համար մի մեծ խումբ գիտական աշխատողների հանձնվեցին վաստակագրեր և գովեստագրեր։

Ժողովում դիտական զեկուցումներով հանդես եկան ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Յու. Ալեքսանյանը («Հիբրիդային բշիշները և նրանց նշանակությունը մոլեկուլարշշային կենսաբանության զարգացման համար») և ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Ջահուկյանը («Հնդեվրոպական լեզուների նախահայրենիքի պրոբլեմը ժամանակակից գիտության մեջ»)։

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Բ. Առաքելյանի, Ս. Վարդանյանի և ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Ռ. Մարտիրոսյանի զեկուցումների հիման վրա հաստատվեցին ՀՍՍՀ ԳԱ բաժանմունքի կանոնադրությունը, ՀՍՍՀ ԳԱ գիտահետազոտական ինստիտուտի կանոնադրությունը, ՀՍՍՀ ԳԱ ընտրությունների կանոնադրությունը։

ՀՍՍՀ ԳԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Մայիսի 10-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի տարեկան ժողովը։ Բաժանմունքի 1987 թ. գործունեության հիմնական արդյունքների մասին զեկուցմամբ հանդես եկավ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Բ. Առաքելյանը։ 1987 թ. մեր երկրի կյանքում նշանավորվեց խոշոր իրադարձությամբ. սովետական ժողովուրդը տոնեց Հոկտեմբերյան մեծ հեղափոխության 70-ամյա տարելիցը, ասաց նա։ 1987 թ. հունվարյան և հունիսյան պլենումների լույսի տակ վերլուծական քննության ենթարկվեց սովետական ժողովուրդների անցած ուղին, հատուկ ուշադրության առարկա հանդիսացան երկրի հասարակական-տնտեսական, քաղաքական և գաղափարական կյանքի վերակառուցման խնդիրները։ Վերակառուցումը, թեև ոչ անհրաժեշտ տեմպերով ու խորությամբ, տեղի է ունենում նաև հասարակական գիտությունների բնագավառում։ 1987 թ. ԳԱ նախագահությունը քննարկել է պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ինստիտուտների գիտական գործունեության ընթացքը, ճշտվել են դրանց գիտահետազոտական ուսումնասիրությունների հիմնական ուղղությունները, կրկին վերանայվել են գիտահետազոտական աշխատանքի պլանները՝ դրանք վերակառուցման խնդիրներին ավելի մերձեցնելու, աշխատանքների գիտական որակը բարձրացնելու և արդյունավետությունը մեծացնելու նշանարանով։ Բաժանմունքի ինստիտուտների գիտական հետազոտությունները ինքնանպատակ չեն։ Դրանք պետք է կատարվեն մի կողմից՝ նոր մտածողության և վերակառուցման խնդիրներին համապատասխան, մյուս կողմից՝ ակտիվորեն նպաստեն մեր հանրապետության աշխատավորության, մասնավորապես երիտասարդության գաղափարական և հոգևոր աճին, նրանց ինտերնացիոնալ և հայրենասի-

բական դաստիարակությանը, հասարակական-քաղաքական և աշխատանքային ակտիվության բարձրացմանը։

Բ. Առաքելյանը հանգամանորեն խոսեց բաժանմունքի հիմնարկների՝ Տնտեսագիտության, Պատմության, Հնագիտության և ազգագրության, Արևելագիտության ինստիտուտների, Սփյուռքահայ համայնքների պատմության և մշակույթի բաժնի, Հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոնի, բաժանմունքի, նրա բյուրոյի, Արտասահմանյան գաղափարական հոսանքների պրոբլեմների և Սոցիալիստական ազգերի զարգացման ու մերձեցման պրոբլեմների խորհուրդների, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության կոմպլեքսային գիտական խորհրդի հայկական սեկցիայի գործունեության մասին։

Բաժանմունքի հիմնարկներում, շարունակեց զեկուցողը, պետք է ներդրվեն գիտական ուսումնասիրության նորագույն մեթոդները ե տեխնիկան, մեծ անելիքներ կան հրապարակայնության և դեմոկրատիայի ծավալման բնագավառում։ Այնուհետև Բ. Առաքելյանը անդրադարձավ բաժանմունքի գիտական աշխատանքներում եղած թերություններին, կատարեց մի շարք գործնական առաջարկներ։

Ներկայացվող հաշվետվությունը սահմանափակված է 1987 թ. շրջանակներով, այսուհանդերձ, ասաց Բ. Առաքելյանը, չենք կարող չանդրադառնալ 1988 թ. փետրվար-մարտ ամիսներին Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած անցքերին։ Դրանց արձագանքները դրրսևորվեցին ոչ միայն մասսայական ցույցերով Երևանում, այլև սովետական կարգերին անհարիր չարդերով ու բարբարոսական բռնություններով՝ Սումգայիթում, այն էլ ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովի՝ Ադրբեջանի և Հայաստանի աշխատավորությանը հղած շրջհայաց դիմումից հետո։ Պատմաբանները արձագանքեցին Լեռնային Ղարաբաղի բնակչության արդարացի պահանջներին, կազմվեցին հարցին վերաբերող գիտականորեն հիմնավորված տեղեկանքներ։ Հանրապետության գիտնականները մասնակցեցին Մոսկվայում ՍՍՀՄ ԳԱ և Խաղաղության կոմիտեի կազմակերպած խորհրդակցություններին, մշակվեցին հայ, վրաց, ադրբեջանցի և ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի գիտնականների գործունեության համատեղ ծրագրեր։ Սակայն մեր հանրապետության գիտնականների խնդիրները դրանով չեն ավարտվում։ Անհրաժեշտ է մշակել ժողովուրդների բարեկամության և ինտերնացիոնալիզմի բազմակողմանի ու գիտականորեն հիմնավորված լուսաբանման և քննարկման ծրագիր։ Հատուկ ուսումնասիրման առարկա պետք է դառնան ազգերի ինքնորոշման, ինչպես և ազգային ինքնագիտակցության ու հոգեբանության հարցերը։

Բաժանմունքի իսկական անդամների և թղթակից-անդամների 1987 թ. գործունեության մասին զեկուցումով հանդես եկավ բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի տեղակալ, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Վ. Խաչաթրյանը։

Բաժանմունքի 1987 թ. գործունեության արդյունքների քննարկմանը մասնակցեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Մ. Քոչանյանը, Մ. Ներսիսյանը, բանասիրական գիտությունների թեկնածու Կ. Դալլաքյանը, պատմական գիտությունների դոկտոր Խ. Բարսեղյանը։ Նրանք հավանություն տվեցին հաշվետու զեկուցմանը, բաժանմունքի 1987 թ. գործունեությունը գնահատեցին բավարար։ Ելույթ ունեցողները հանգամանորեն խոսեցին վերակառուցման ուղղությամբ բաժանմունքի ինստիտուտների կատարած և կատարելիք աշխատանքների, հասարակագիտական ինստիտուտների համար նոր մասնաշենք կառուցելու անհրաժեշտության մասին, նշվեց գիտական արտադրանքը օտար լեզուներով հրատարակելու հրատապության հարցը (մասնավորապես «Հայ ժողովրդի պատմության» միհատորյակը օտար լեզուներով հրատարակելու), վերակառուցման արդի փուլում պատմագիտության առջև ծառացած խնդիրների, նոր մտածողության դիրքերից մեր երկրի պատմության շրջադարձային փուլերի նորովի գնահատման հարցը, որոշվեց հարց բարձրացնել, որպեսզի ստեղծվի Եղեռնին նվիրված պատմության թանգարան։ Նշվեց նաև գենոցիդի իրողությունը ճանաչելու անհրաժեշտությունը։ Խոսվեց նաև այն մասին, որ տնտեսաշվարկի և ինքնաֆինանսավորման նոր պայմաններում պետք է կտրուկ բարձրացնել աշխատությունների ձեռագրերի գիտական մակարդակը, որպեսզի այն ոչ թե խանգարի, այլ խթանի, նպաստի հրատարակչության գործունեությունը, այսինքն՝ պլանավորումը պետք է կատարել տնտեսական գործոնի հաշվառման հիման վրա։ Մտքերի փոխանակությունն ամփոփեց Բ. Առաքելյանը։

Ժողովում լսվեցին զեկուցումներ։ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Քոչանյանը հանդես եկավ «Վերակառուցումը և տնտեսագիտական պրոբլեմները» զեկուցումով, իսկ պատմական գիտությունների դոկտոր Ռ. Սանակյանը՝ «Հայ ժողովրդի նոր պատմության հարցերը եվրոպական հեղինակների լուսաբանմամբ» թեմայով։

ՀՍՍՀ ԳԱ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Մայիսի 11-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի տարեկան ժողովը։ Բաժանմունքի 1987 թ. գործունեության հիմնական արդյունքների մասին հաշվետու զեկուցմամբ հանդես եկավ փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Բրուտյանը։ Հաշվետու տարում շարունակվել են աշխատանքները ՍՄԿԿ XXVII և ՀԿԿ XXVIII համագումարների, ՍՄԿԿ Կենտկոմի հունվարյան և հունիսյան պլենումների որոշումների կենսագործման ուղղությամբ, ասաց նա։ Այդ որոշումների լույսի ներքո վերանայվել և ճշգրտվել են բաժանմունքի ինստիտուտների գիտահետազոտական և հրատարակչական պլանները։ 1987 թ. բաժանմունքն անց է կացրել 6 ընդհանուր ժողով, որից 3-ը ՀՍՍՀ ԳԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի հետ։ Երկու բաժանմունքների համատեղ առաջին նիստում անց է կացվել Ստեփան Շահումյանի անվան մրցանակարաշխություն. մրցանակը շնորհվել է ՀՍՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի դիրեկտորի տեղակալ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր Ա. Էկմալյանին՝ «Գիտություն, ծագումը և սոցիալական ֆունկցիան» գրքի համար։ Հետագա համատեղ ժողովներում քննարկվել են Ուրարտու պետության մշակույթի և պատմության հարցերը։ Բաժանմունքը, շարունակեց զեկուցողը, ունեցել է բյուրոյի 21 նիստ։ Բյուրոյի նիստերում լսվել և քննարկվել են «ՍՄԿԿ XXVII և ՀԿԿ XXVIII համագումարների որոշումների կենսագործման ուղղությամբ բաժանմունքի միջոցառումների պլանի», հանրապետության աշխատավորության աթեիստական և ինտերնացիոնալ դաստիարակության, անդրկովկասյան հանրապետությունների աշխատավորության ինտերնացիոնալ կապերի հետագա զարգացման ուղղությամբ բաժանմունքի միջոցառումների պլանների կատարման ընթացքը։ Քննարկվել են ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում ՍՄԿԿ XXVII և ՀԿԿ XXVIII համագումարների որոշումներից բխող՝ սոցիալիստական ռեալիզմի ուսումնասիրման հարցերը։ Բյուրոյի ընդլայնված նիստերում լսվել են բանասիրության և արվեստի պրոբլեմներին նվիրված գիտական զեկուցումներ, քննարկվել են դիտակազմակերպական մի շարք հարցեր։

Զեկուցողը հանգամանորեն ներկայացրեց փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի ինստիտուտներում ձեռք բերված կարևոր արդյունքները, նշեց, թե ինչ պրոբլեմների ուղղությամբ են ընթացել հետազոտությունները փիլիսոփայության, իրավունքի, հոգեբանության և արվեստի բնագավառներում։ Այնուհետև Գ. Բրուտյանը անդրադարձավ ինստիտուտներում ձեռք բերված արդյունքներին, թվարկեց այն թեմաներն ու պրոբլեմները, որոնցով զբաղվում են դիտական աշխատակիցները։ Դրանք են՝ ՍՍՀՄ 1991—2010 թթ. գիտատեխնիկական առաջադիմության կոմպլեքս ծրագիր, մատերիալիստական դիալեկտիկայի՝ իբրև համընդհանուր զարգացման տեսության մշակում, գիտական ճանաչողության տեսություն և տրամաբանություն, պատմական մատերիալիստական տեսության, հասարակական գիտությունների մեթոդաբանության մշակում, դրանց դերի բարձրացումը գիտատեխնիկական և սոցիալական առաջադիմության սերտաճման պրոցեսում, սովետները որպես սոցիալիստական ժողովրդապետության ձև, ՍՍՀՄ ժողովուրդների փիլիսոփայական մտքի պատմությունը, ՍՍՀՄ ժողովուրդների պատմական ներդրումը սովետական հասարակության և համաշխարհային մշակույթի մեջ, մարքս-լենինյան դեղագիտության կարևորագույն կատեգորիաները և արվեստի ընդհանուր տեսական պրոբլեմները, գեղագիտական մտքի զարգացումը, եղբայրական սոցիալիստական երկրների գրականությունների զարգացման օրինաչափությունները, համաշխարհային հեղափոխական պրոցեսը և կապիտալիստական երկրների արդի գրականությունը, ՍՍՀՄ ժողովուրդների գրականության նախահեղափոխական շրջանի պատմությունը, սովետական բազմազգ գրականության պատմությունը, ՍՍՀՄ ժողովուրդների լեզուներ, լեզվաբանության տեսություն և մեթոդաբանություն, հանրալեզվաբանություն, կիրառական լեզվաբանություն, ռուսաց լեզուն որպես ՍՍՀՄ ժողովուրդների ազգամիջյան հաղորդակցման լեզու, ռուսաց լեզուն ժամանակակից աշխարհում։ Գ. Բրուտյանը անդրադարձավ նաև բնագիտության և տեխնիկայի պատմության խորհրդի, Դավիթ Անհաղթի տեսական ժառանգության և Միջնադարյան Հայաստանի փիլիսոփայական գիտական խորհրդի, Բարոյագիտության պրոբլեմների դիտական խորհրդի գործունեությանը։

Վերջում ակադեմիկոս Գ. Բրուտյանն ասաց, որ փետրվար-մարտ ամիսներին Լենինյան Ղաբաղի շուրջ ծավալված դեպքերը մեծ հուզմունք և տագնապ առաջացրին մեր ժողովրդի բոլոր խավերի մեջ, մոբիլիզացրին գիտնականների ջանքերը հայկական մարզի բնակչության հոգևոր պահանջմունքների նկատմամբ կոմպլեքսային ծրագրեր մշակելու ուղղությամբ։ Այդ առումով նա մի շարք կոնկրետ առաջարկություններ կատարեց։

Բաժանմունքի իսկական անդամների և թղթակից-անդամների 1987 թ. գործունեության հիմնական արդյունքների մասին զեկուցեց փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի տեղակալ, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Դ. Ջահուկյանը:

Փիլիսոփայության, բանասիրության և արվեստի բնագավառում հանրապետության բուհերի 1987 թ. հետազոտությունների արդյունքների և կոորդինացիայի խնդիրներին անդրադարձավ բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի տեղակալ, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Է. Ջրբաշյանը:

Զեկուցումների շուրջ ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Է. Ջրբաշյանը, բանասիրական գիտությունների դոկտոր Լ. Հախվերդյանը, պատմական գիտությունների դոկտոր Խ. Բարսեղյանը: Նրանք հավանություն տվեցին հաշվետու զեկուցմանը, բաժանմունքի 1987 թ. գործունեությունը գնահատեցին բավարար և խոսեցին ինստիտուտներում ատենախոսության ու աշխատավարձի բաշխման ամենամյա պրակտիկան արմատավորելու, խոշոր թեմաների ընտրության կատարման, Հովհ. Թումանյանի ակադեմիական հատորների հրատարակության հետ կապված դժվարությունների (թղթի, տպագրության, ազատ բաժանորդագրության և այլ հարցեր), մեր ժողովրդի մեծերի գրական ժառանգության հրատարակության, գիտաշխատակիցներին ըստ իրենց հնարավորության և տաղանդի, ըստ ընդունակությունների օգտագործելու հարցի, սոցիոլոգիական հետազոտություններն արդի պահանջների ոգով և մակարդակով կատարելու, աշխատությունների հրատարակության հետ կապված բազմազան հարցերի, հրատարակչության նյութական և տեխնիկական բազայի ամրապնդման մասին: Մտքերի աշխույժ և անկաշկանդ փոխանակությունն ամփոփեց Գ. Բրուտյանը:

Ժողովում զեկուցումներով հանդես եկան ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Վ. Նալբանդյանը և փիլիսոփայական գիտությունների թեկնածու Գ. Պողոսյանը: Վ. Նալբանդյանի զեկուցման թեման էր «Մարդու էության ըմբռնումը Գր. Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմում», իսկ Գ. Պողոսյանինը՝ «Գիտությունը վերակառուցման ճանապարհին (մեթոդաբանական և սոցիոլոգիական վերլուծություն)»: